ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 ապրիլի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

54
(2720)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲՈՒՄ Է. ՄԱՍ 174



Երեկ խորհրդարանում Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ խեղաթյուրեց փաստերը: Նա պատասխանում էր ԼՂ հակամարտության վերաբերյալ հարցին՝ անկախության տարիների ընթացքում: Փաշինյանը նշեց. «Այստեղ մենք ունենք երկու մաս. մինչեւ «Մադրիդյան սկզբունքներ» եւ «Մադրիդյան սկզբունքներ»-ից հետո: Մինչեւ «Մադրիդյան սկզբունքները» հայկական կողմի դիրքորոշումը եղել է այն, որ ԼՂ-ը երբեք չի եղել անկախ Ադրբեջանի կազմում եւ ԽՍՀՄ փլուզման համատեքստում իրականացրել է իր ինքնորոշման իրավունքը ու ինչպես Խորհրդային միության այլ սուբյեկտներ, իրացնելով ինքնորոշման իրավունքը, ստացել է անկախություն, հետեւաբար չի եղել Ադրբեջանի կազմում, անկախացել է ԽՍՀՄ-ից: 2007թ.-ին իշխանության տրանսֆորմացիայի ընթացքում, երբ Սերժ Սարգսյանը վարչապետ էր, իսկ Ռոբերտ Քոչարյանը նախագահ, այդ ժամանակ ի հայտ եկան «Մադրիդյան սկզբունքներ»-ը, որտեղ ընդգծվում էր եւ տարածքային ամբողջականության սկզբունքը, եւ ինքնորոշման իրավունքի սկզբունքը: Արձանագրվում էր, որ պետք է ճշգրտվի ԼՂ կարգավիճակը ու այդ կարգավիճակի ճշգրտման մեխանիզմը պետք է համաձանեցված լինի նաեւ Ադրբեջանի կողմից: Եթե «Մադրիդյան սկզբունքներ»-ից առաջ հայկական կողմի դիրքորոշումն այն էր, որ Ղարաբաղը երբեք չի եղել Ադրբեջանի կազմում, հետեւաբար ապագա կարգավիճակի հարցում պայմանավորվելու կարիք կարող է չլինել, «Մադրիդյան սկզբունքներ»-ով արձանագրվում է, որ ԼՂ կարգավիճակի հարցում պետք է պայմանավորվածություն ձեռք բերվի Ադրբեջանի հետո, ընդ որում՝ այդ սկզբունքների նախագծի հեղինակը որոշ եւ հավաստի տեղեկությունների համաձայն, հենց հայկական կողմն է եղել: «Մադրիդյան սկզբունքներ»-ով ՀՀ-ն ԼՂ-ն ճանաչեց որպես Ադրբեջանի մաս»,- ասաց Փաշինյանը՝ հավելելով, որ այդ տրամաբանությամբ ԼՂ-ն պետք է լինի Ադրբեջանի մաս, որպեսզի կարողանա ինքնորոշվել:

Նշենք,որ Առաջին անգամը չէ, «Մադրիդյան սկզբունքների» մասին խոսում Փաշինյանը: Սակայն 2007-ի նոյեմբերին ներկայացված Մադրիդյան սկզբունքների առաջին կետը վերաբերում է ոչ թե յոթ շրջանները հանձնելուն, այլ հայկական կողմի համար ամենաառանցքային՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի վերջնական իրավական կարգավիճակը որոշող պլեբիսցիտին: «ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը կորոշվի պլեբիսցիտի միջոցով, որը ԼՂ բնակչությանը ընձեռում է կամքի ազատ եւ իրական արտահայտում: Պլեբիսցիտի ժամկետներն ու մանրամասները կողմերը կհամաձայնեցնեն ապագա բանակցություններում, ինչպես նկարագրված է 9-րդ կետում: ԼՂ բնակչություն ասելով հասկացվում են 1988 թ. ազգային համամասնությունով ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերը այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է մինչեւ հակամարտության սկիզբը...»,- նշված էր փաստաթղթում:



Գրեթե ամեն օր ժողովրդավարության, խոսքի իրավունքի եւ ազատ կամարտահայտման մասին խոսող ՔՊ-ականները վերածվել են կոճակ սեղմողների եւ մեկ մարդու կամք կատարողների խմբի: Ամեն որոշում կայացվում է բացառապես մեկ մարդու հրահանգով, եւ այդ մեկ մարդը Նիկոլ Փաշինյանն է: Սրա մասին թերեւս վկայում են նաեւ ԱԺ-ում երեկ տեղի ունեցած քվեարկությունները: Այպիսով, երեկ ՔՊ-ականները միանձնյա ՄԻՊ ընտրեցին դատախազի տեղակալին, միաձայն էլ ընդդիմադիր պատգամավոր Միեր Սահակյանին զրկեցին անձեռնմխելիությունից, որպեսզի դատախազութունը հնարավորություն ունենա հանրային քրեական հետապնդում սկսել նրա նկատմամբ: Երկու քվեարկություններին էլ ընդդիմությունը չի մասնակցել: Ուշագրավ է, որ ՄԻՊ-ն ընտրվել է 69 կողմ 0 դեմ ձայնով, իսկ Միեր Սահակյանը անձեռնմխելիությունից զրկվեց 65 կողմ 0 դեմ ձայների հարաբերակցությամբ: Ստացվում է՝ ՔՊ-ականներն անգամ ձեռնպահ քվեարկելու հնարավորություն չեն ունեցել, անվավեր չեն արել որեւէ թերթիկ, մեկ մարդու նման գնացել ու կատարել են վերեւներից իջեցված հրահանգը: Նկատենք, որ այսօրվա իշխանության ներկայացուցիչներն իրենք էին ՀՀԿ-ականներին հեգնում եւ անվանում «կոճակ սեղմողներ», փաստացի հիմա այս հարցում իրենք հավասարվել ու նույնիսկ գերազանցել են ՀՀԿ-ականներին:

ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարար Ալիկ Միրզաբեկյանը չի ներկայացել Հակակոռուպցիոն դատարան: Նրան, որպես վկա, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի դեմ հարուցված քրեական գործով ծանուցել էին ներկայանալ դատարան: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Ալիկ Միրզաբեկյանը դիմում է ուղարկել Հակակոռուպցիոն դատարան եւ հայտնել, որ առողջական խնդիրներ ունի, ուստի չի կարող ներկայանալ դատարան: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի եւ ՊՆ նախկին պաշտոնյաների քրեական գործով դատարան են կանչվելու ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարար Ալիկ Միրզաբեկյանը, Սեյրան Օհայանը եւ ՊՆ որոշ աշխատակիցներ: Սեյրան Օհանյանը ներկայացել է եւ հարցաքննվել, ՊՆ աշխատակիցների հարցաքննությունը շարունակվում է: Հավելենք, որ Ալիկ Միրզաբեկյանը 2016 թվականին, Սերժ Սարգսյանի հրամանով, ազատվել էր ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի պաշտոնից: Ըստ լուրերի՝ Միրզաբեկյանը սպառազինության եւ սննդամթերքի մատակարարման գնումները շուկայականից բարձր գներով էր իրականացրել:



Այսօր խորհրդարանում տեղի կունենա փակ քննարկում, որի ընթացքում քննարկվելու է սահմաններին տիրող իրավիճակը: Մասնավորապես, վերջին օրերին Սյունիքում ու Գեղարքունիքում սահմանային լարումների առիթով խորհրդարանում պատգամավորները բացատրություններ կլսեն գործադիրից: Նշենք, որ փակ նիստը տեղի է ունենալու հենց ԱԺ-ում կեսօրից հետո: Նիստը նախաձեռնել է «Հայաստան» խմբակցությունը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ փակ քննարկմանը մասնակցելու է ԳՇ պետ Էդվարդ Ասրյանը, լինելու են ներկայացուցիչներ նաեւ ՊՆ-ից եւ Ջինված ուժերից, որոնք տիրապետում են սահմանային իրավիճակին եւ հստակ կարող են պարզաբանումներ տալ՝ իրավիճակի հետ կապված:

ԻՄԱՍՏ ՉՈՒՆԻ

ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՎՈՐ

Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումներն ապրիլի 11-ին կրակ էին բացել Տեղ համայնքում ինժեներական աշխատանքներ իրականացնող ՀՀ ԶՈՒ զինծառայողների ուղղությամբ. հայկական կողմը դիմել է պատասխան գործողություններ: Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները գյուղի դիրքերի ուղղությամբ կիրառել էին ականանետային միջոցներ: Ադրբեջանական սադրանքի հետեւանքով հայկական կողմն ունի 4 զոհ եւ 6 վիրավոր:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանի հետ:

-Պարոն Բագրատյան, մինչ Հայաստանի իշխանություններն անընդհատ խոսում են խաղաղության գործընթացի, խաղաղության պայմանագրի մասին, Ադրբեջանն ամենօրյա իր սադրանքների միջոցով ցույց է տալիս, որ ամենեւին էլ միտված չէ խաղաղության գնալուն: Այս լարված պայմաններում ինչպե՞ս եք պատկերացնում խաղաղության պայմանագրի շուրջ հետագա բանակցությունները:

-Պետք է գնալ խաղաղության գործընթացի, սակայն մեզ համար ամենակարեւորն այն է, թե ինչ երաշխիքներ պետք է լինեն դրա համար, այսինքն՝ ինքնին խաղաղության պայմանագիրը դեր չի ունենա, այն թղթի կվերածվի, եթե երաշխիքներ չլինեն, այսինքն՝ կարեւոր է երաշխիքների ինստիտուտը: Երաշխիքն այն չէ, որ ՌԴ-ն կամ ԱՄՆ-ն հայտարարեն, թե իրենք երաշխավորում են այդ խաղաղությունը. դա բավարար չէ, դրա հիմքում պետք է դրված լինի Անվտանգության խորհրդի որոշում, դրա արդյունքում ցանկացած պահի միջազգային խաղաղապահներ պետք է կարողանան միջամտել: Համար առաջին երաշխավորը, իհարկե, մեր Զինված ուժերն են, բայց քանի որ թշնամին անընդհատ սադրում է, կարեւոր է միջազգային երաշխիքներ ունենալը, այդ դեպքում խաղաղության պայմանագիրն իմաստ կունենա, հակառակ դեպքում որեւէ իմաստ չի ունենա:

-Այն դեպքում, երբ միջազգային հանրությունն անգամ Ադրբեջանի սադրանքներին հստակ չի արձագանքում, չի դատապարտում, միջազգային ի՞նչ երաշխիքներ կարող են լինել:

-Ճիշտ է, միջազգային հանրությունն ակտիվ չի արձագանքում, քանի որ բոլորի ուշադրությունը կենտրոնացել է ռուս-ուկրաինական հակամարտության վրա, բայց մենք պետք է կարողանանք բարձրաձայնել եւ բոլոր դիվանագիտական խողովակներով աշխարհին տեղեկացնել այդ մասին: Փորձում ենք ուշադրությունը հրավիրել մեր տարածաշրջանի հակամարտության, հատկապես՝ Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության, գործունեության եւ հռետորաբանության վրա:

-Ի՞նչ աշխատանք ենք տանում այդ ուղղությամբ միջազգային հարթակներում:

-Մեր բոլոր գործընկերները, բարեկամական խմբի անդամները, միջազգային կառույցներին մասնակցող մեր պատգամավորներն ուղարկել են սահմաններին տիրող իրադրության մասին տեղեկությունը միջազգային կազմակերպություններին, ստանում ենք նաեւ պատասխաններ, որ շուտով հանդես կգան դիրքորոշմամբ, ինչը շատ կարեւոր է:

-Ռուսաստանը պարբերաբար հայտարարում է, որ պատրաստ է ՀԱՊԿ զորքեր ուղարկել հայ-ադրբեջանական սահման. ինչու՞ Հայաստանը չի ընդունում այս առաջարկը, եթե սա լրացուցիչ միջոցառում է անվտանգության ապահովման տեսանկյունից:

-Մենք այս դեպքում խնդիր ունենք՝ ՀԱՊԿ զորքերի տեղակայման վայրի հետ կապված, այն սահմանի, որ մենք ընդունում ենք՝ որպես ՄԱԿ-ի կողմից ճանաչված սահման Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ: ՀԱՊԿ-ը այդ սահմանները ճանաչելու խնդիր ունի. եթե ՀԱՊԿ-ը ճանաչի, որ, օրինակ, Տեղ գյուղից հյուս-արեւելք մինչեւ 5կմ ՀՀ սահմանն է, բնականաբար, մենք կցանկանանք, որ տեղակայվեն նրանց զորքերը: Ցանկացած ուժ, որը պատրաստ է մեր սահմանների անվտանգությունն ապահովելու, մեզ համար ընդունելի է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՉԷԻՆ ԿՐԱԿՈՒՄ

«ՉԷԻ ՑԱՆԿԱՆԱ՝ ԱՅԴ ՏԵՍԱՆՅՈՒԹԸ ՇՐՋԱՆԱՌՎԵՐ»

«Ես չգիտեմ՝ ՊՆ-ն ինչու է հերքել, բայց ունեմ տեղեկություն, որ երեկ Սոթքում լսելի կրակոցներ են եղել տարբեր տրամաչափի զենքերից. անձամբ եմ խոսել բնակիչների հետ»,- լրագրողների հետ ճեղագրույցի ժամանակ ասաց պատգամավոր Թագուհի Թովմասյանը:

«Ես հանքի աշխատակիցներից էլ տեղեկացա, որ իրենց անմիջապես տարհանել են հանքի տարածքից, որպեսզի հնարավոր վտանգները չեզոքացնեն. իրավիճակն այս պահին խաղաղ է: Ինչ վերաբերում է Տեղ համայքնում տեղի ունեցած դեպքերին, ապա այն հատվածը, որտեղ տեղի ունեցավ փոխհրաձգություն, բավականին վերջերս դարձավ առաջնագիծ, ու մենք տեսանք, որ այնտեղ առաջնագծին նմանվող որեւէ բան չկար: Ես կարծում եմ, որ տարածված տեսանյութը պետք էր ուղարկել միջազգային կառույցներին, բայց ցույց չտալ հանրությանը, որպեսզի հանրությունը չտեսնի, թե որքան անտարբեր կամ անգործունակ էին կանգնած զինծառայողները ու թշնամուն տեսնելուց չեն ոչնչացնում. դա լավ ազդակ չէ, որ մենք տալիս ենք: Գոյություն ունի դասագրքային ճշմարտություն՝ եթե զինվորը տեսնում է, որ թշնամին մոտենում է, նա այլ բան չունի անելու, քան վերացնել թշնամուն: Չէի ցանկանա, որ այդ տեսանյութը շրջանառվեր: Ես գտնում եմ, որ հայ զինծառայողի ադեկվատ արձագանքը ուշացած էր»,- ասաց պատգամավորը:

Թագուհի Թովմասյանի կարծիքով՝ այդպես հնարավոր է՝ փորձ էր արվում ցույց տալ, որ Հայաստանը շարունակում է առաջնային համարել խաղաղության օրակարգը:

Անդրադառնալով ադրբեջանցի զինծառայողների՝ Սիսիանի բնակավայրերում հայտնվելու հանգամանքին՝ պատգամավորը նշեց. «Ցավալի իրողություն է եւ խայտառակություն, որ ադրբեջանցի զինծառայողը կարող է թեկուզ մոլորված հայտնվել Հայաստանի ոչ միայն սահմանից ներս, այլեւ այնքան խորքը, որ գա մտնի մարդկանց տուն, հաց ուտի, փոխվի. բա մեր ուժային կառույցները, անվտանգության երաշխավորները ինչո՞վ են զբաղված, հատկապես երբ նրանցից մեկը հայտնաբերված չէ, ու ճշգրտենք՝ որտեղ է ու ինչ պլաններ ունի»:

ՍԿԱՆԴԱԼՆԵՐ ԵՆ ՀԱՍՈՒՆԱՆՈՒՄ

ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի նախկին ղեկավարին փոխկապակցված խոշոր շինարարական «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ի շուրջ սկանդալներ են հասունանում: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ համայնքի ղեկավարները դատարաններ են դիմում՝ ընդդեմ ընկերության: Մասնավորապես, Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով, որ դատարանը ստիպի Արարատ համայնքի վարչական տարածքի գյուղ Նոյակերտ բնակավայրում գտնվող հողատարածքի մրցույթն անվավեր ճանաչել, «Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցութային կարգով, 25 տարի ժամկետով, վարձակալության տրամադրելու մասին» 22.04.2019թ. որոշումը, վերացնել, որպես հետեւանք՝ «Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին» պայմանագիրը եւ դրա հիման վրա կատարված վարձակալության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչել: Այսինքն՝ ինչ տվել են ընկերությանը, հետ են ուզում: Ի դեպ, հենց 2019 թվականի մայիսի 23-ին կառավարությունը մաքսատուրքից ազատման արտոնություն տվեց մի շարք ընկերությունների: Այդ ընկերությունների ցանկում հատկապես ուշագրավ էր «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն, որը փոխկապակցված է Հատուկ քննչական ծառայության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սուքիասյանի հետ: «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն զբաղվում է ավազի եւ խճի արդյունահանմամբ: Ըստ կառավարության հիմնավորման՝ ընկերության կողմից ներմուծվող սարքավորումներն օգտագործվելու են հանքարդյունաբերության մեջ (Կոտայքի մարզ): Նկատենք, որ այս ընկերությունն առաջին անգամ չէ, որ արտոնություն է ստանում գործադիրից: 2018 թ. հունվարի 25-ին «ՄԼ Մայնինգը» ստացել էր 2 մլրդ դրամի կամ 5 մլն դոլարի սարքավորումների ներմուծման մաքսատուրքի արտոնություն: Երկու արտոնություն էլ ստացել է 2017-ին՝ հունիսին եւ օգոստոսին: «Ժողովուրդ» օրաթերթը դատական համակարգից էլ է ահազանգ ստացել ընկերության գործունեության մասով, որին կանդրադառնանք առաջիկայում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԵՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՄ խոսնակի հայտարարությունը հայ-ադրբեջանական սահմանին վերջին միջադեպերի վերաբերյալ.

«ԵՄ-ն ափսոսանք է հայտնում զինված բախումների համար, որոնք հայ-ադրբեջանական սահմանին՝ Տեղի շրջանում, դարձել են հայ եւ ադրբեջանցի մի քանի զինծառայողների զոհվելու եւ վիրավորվելու պատճառ: Այս միջադեպը եւս մեկ անգամ ընդգծում է, որ սահմանազատված սահմանի բացակայության դեպքում պետք է հարգել 1991թ.-ի սահմանագիծը, եւ ուժերը հետ քաշվեն այս գծից անվտանգ հեռավորություններ՝ կանխելու նմանատիպ միջադեպերը: Նախկին պարտավորությունները պետք է հարգվեն, այդ թվում՝ 2022 թվականի հոկտեմբերին Պրահայում ձեռք բերվածը՝ կապված 1991 թվականի Ալմաթիի հռչակագրի համաձայն տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման հետ:

ԵՄ-ն նաեւ կոչ է անում ակտիվացնել սահմանի սահմանազատման շուրջ բանակցությունները եւ պատրաստակամ է աջակցելու այս գործընթացին:

Մենք վերահաստատում ենք զսպվածության եւ բոլոր վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու մեր կոչերը: ԵՄ-ն շարունակում է աջակցել այդ ջանքերին ամենաբարձր մակարդակով, ինչպես նաեւ Հայաստանում ԵՄ առաքելության ներկայությամբ»:

ԾԵԾԻ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Կորյուն Սահակյանին մեղադրանք է ներկայացվել. 2022 թվականի ապրիլի 30-ին՝ ժամը 20:20-ի սահմաններում, Սահակ Կորյունի Սահակյանը իր հոր՝ Կորյուն Սուրենի Սահակյանի հետ, ինֆարկտի նախանշաններով «Հրազդան ԲԿ» ՓԲԸ տեղափոխված Գարիկ Սարդարյանին Երեւան քաղաք տեղափոխելու հարցի շուրջ ծագած անհիմն վեճը որպես չնչին առիթ օգտագործելով, սեփական անձի առավելություններն ընդգծելու նպատակով վիճաբանել են «Հրազդան ԲԿ» ՓԲ ընկերության բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող անձնակազմի հետ, բացահայտ արհամարհելով հանրության մեջ ընդունված բարոյական եւ իրավական նորմերը՝ սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել «Հրազդան ԲԿ» ՓԲ ընկերության բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող անձնակազմի հասցեին, որի ընթացքում Կորյուն Սահակյանը քաշքշել է շտապօգնության մեքենայի վարորդ Էդիկ Մկրտչյանին եւ գլխով հարվածել վերջինիս գլխին, իսկ Սահակ Սահակյանը ոտքերով եւ ձեռքերով հարվածներ է հասցրել բժիշկ Ռուբեն Բաղդասարյանի գլխին եւ մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթեւ վնաս:

ՀԵՐԹԸ ԽԱԽՏԵԼ Է

2021 թվականի դեկտեմբերի 31-ին՝ ժամը 16:30-ի սահմաններում, Արշակ Ավագյանը, Երեւան քաղաքի Աէրացիա 1 հասցեում գործող «Նոր Ջովք» սուպերմարկետում՝ դրամարկղի մոտ հերթը չպահելու շուրջ ծագած վիճաբանության պատճառով սուպերմարկետի մուտքի մոտ ծեծել է Արման Ավետիսյանին. ձեռքերով եւ ոտքերով հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄ Է ՓԱՍՏԵՐԸ

«Ես կարծում եմ, որ մենք ֆունդամենտալ պետք է անդրադառնանք այն կոնցեպտին, որով հետաքրքրվել է ԼՂ հարցը մեր անկախության տարիների ընթացքում»,- ԱԺ-ում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Այստեղ մենք ունենք երկու մաս՝ մինչեւ «Մադրիդյան սկզբունքներ» եւ «Մադրիդյան սկզբունքներ»-ից հետո: Մինչեւ «Մադրիդյան սկզբունքներ»-ը հայկական կողմի դիրքորոշումը եղել է այն, որ ԼՂ-ն երբեք չի եղել անկախ Ադրբեջանի կազմում եւ ԽՍՀՄ փլուզման համատեքստում իրականացրել է իր ինքնորոշման իրավունքը, ու ինչպես Խորհրդային Միության այլ սուբյեկտներ, իրացնելով ինքնորոշման իրավունքը, ստացել է անկախություն, հետեւաբար չի եղել Ադրբեջանի կազմում, անկախացել է ԽՍՀՄ-ից: 2007թ.-ին՝ իշխանության տրանսֆորմացիայի ընթացքում, երբ Սերժ Սարգսյանը վարչապետ էր, իսկ Ռոբերտ Քոչարյանը՝ նախագահ, այդ ժամանակ ի հայտ եկան «Մադրիդյան սկզբունքներ»-ը, որտեղ ընդգծվում էր եւ՛ տարածքային ամբողջականության սկզբունքը, եւ՛ ինքնորոշման իրավունքի սկզբունքը: Արձանագրվում էր, որ պետք է ճշգրտվի ԼՂ կարգավիճակը, ու այդ կարգավիճակի ճշգրտման մեխանիզմը պետք է համաձայնեցված լինի նաեւ Ադրբեջանի կողմից: Եթե «Մադրիդյան սկզբունքներ»-ից առաջ հայկական կողմի դիրքորոշումն այն էր, որ Ղարաբաղը երբեք չի եղել Ադրբեջանի կազմում, հետեւաբար ապագա կարգավիճակի հարցում պայմանավորվելու կարիք կարող է չլինել. «Մադրիդյան սկզբունքներ»-ով արձանագրվում է, որ ԼՂ կարգավիճակի հարցում պետք է պայմանավորվածություն ձեռք բերվի Ադրբեջանի հետո, ընդ որում՝ այդ սկզբունքների նախագծի հեղինակը, որոշ եւ հավաստի տեղեկությունների համաձայն, հենց հայկական կողմն է եղել: Այսպիսով, հարց է ծագում՝ եթե ԼՂ-ն չեն համարում Ադրբեջանի մաս, ինչո՞ւ պետք է ԼՂ կարգավիճակի հարցը համաձայնեցվի Ադրբեջանի հետ: Այստեղ է, որ ինքնորոշվել նշանակում է լինել որեւէ տեղ, ինքնորոշման իրավունքով այդ տեղից տեղափոխվել մեկ այլ տեղ: «Մադրիդյան սկզբունքներ»-ից առաջ այդ տեղը Խորհրդային Միությունն էր, «Մադրիդյան սկզբունքներ»-ից հետո այդ տեղը Ադրբեջանն է: «Մադրիդյան սկզբունքներ»-ով ՀՀ-ն ԼՂ-ն ճանաչեց որպես Ադրբեջանի մաս»,- ասաց Փաշինյանը՝ հավելելով, որ այդ տրամաբանությամբ ԼՂ-ն պետք է լինի Ադրբեջանի մաս, որպեսզի կարողանա ինքնորոշվել:

«Սա է այդ քաղաքականության իրական բովանդակությունը, ու մեր մեծագույն բացթողումն է, որ հենց 2018-ի այս ամեն ինչով հանդես չենք եկել ու մեր ժողովրդին չենք բացատրել»,-խոսքը եզրափակեց Փաշինյանը:

Սակայն 2007թ.-ի նոյեմբերին ներկայացված «Մադրիդյան սկզբունքներ»-ի առաջին կետը վերաբերում է ոչ թե յոթ շրջանները հանձնելուն, այլ հայկական կողմի համար ամենաառանցքային՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի վերջնական իրավական կարգավիճակը որոշող պլեբիսցիտին:

«ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը կորոշվի պլեբիսցիտի միջոցով, որը ԼՂ բնակչությանը ընձեռում է կամքի ազատ եւ իրական արտահայտում: Պլեբիսցիտի ժամկետներն ու մանրամասները կողմերը կհամաձայնեցնեն ապագա բանակցություններում, ինչպես նկարագրված է 9-րդ կետում: ԼՂ բնակչություն ասելով՝ հասկացվում են 1988 թ. ազգային համամասնությունով ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերը այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է մինչեւ հակամարտության սկիզբը...»,- նշված էր փաստաթղթում:

Տարածքների վերադարձի մասին խոսվում է երրորդ կետում, ըստ որի՝ նախկին ԼՂԻՄ-ին հարակից ադրբեջանական բոլոր տարածքները, որոնք գտնվում են հայկական վերահսկողության տակ, վերադարձվելու են ադրբեջանական վերահսկողության տակ՝ փաստաթղթում նշված կարգով, իսկ մանրամասները կողմերը համաձայնեցնելու են Խաղաղության համաձայնագրով:

Նշվում էր նաեւ՝ հայկական ուժերը դուրս են բերվում Քելբաջարի շրջանից, սակայն մինչեւ Խաղաղության համաձայնագրի ստորագրումը սահմանափակ զորամիավորում տեղակայվելու է Քելբաջարի շրջանի այն տարածքում, որը որոշելու է Միջազգային անցումային հանձնաժողովը:

Հ.Գ. Ավելի ուշ՝ 2009-ին, Լ'Ամվիլլայում ընդունվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահներ Վլադիմիր Պուտինի, Բարաք Օմաբայի եւ Նիկոլա Սարկոզիի հայտարարությունը, որում ներկայացվում էին Ղարաբաղյան կարգավորման տարրերը (Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries): Այդ սկզբունքներում ինքնորոշման դրույթը առաջին կետից իջել էր չորրորդ կետ: Առաջին կետում հայտնվել էր տարածքների վերադարձի դրույթը, որը երրորդ կետում էր:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը ցավակցել է ապրիլի 11-ին ադրբեջանական սադրանքի հետեւանքով զոհված հայ զինծառայողների ընտանիքներին:

«Ցավով տեղեկացանք Տեղ գյուղի սահմանային հատվածում ադրբեջանական սադրանքի պատճառով ապրիլի 11-ին սկսված փոխհրաձգության մասին, որի հետեւանքով ունենք զոհեր եւ վիրավորներ:

Մեր վշտակցությունն ենք բերում մեր հերոս զավակների ծնողներին ու հարազատներին՝ աղոթելով, որ Բարեգութն Աստված երկնային լուսեղեն Իր օթեւաններում խաղաղության մեջ հանգչեցնի նրանց արդար հոգիները:

Շուտափույթ ապաքինում ենք մաղթում վիրավորներին՝ հայցելով Տիրոջ հովանին եւ զորակցությունը Հայոց բանակի հրամանատարներին եւ զինվորներին:

Հայրենյաց պաշտպան մեր քաջարի զավակների սխրանքները միշտ արիությամբ կոգեշնչեն մեր ժողովրդին՝ անկուն ոգով անառիկ ու անվտանգ պահելու տերունապարգեւ մեր հայրենիքը եւ մեր անկախ պետականությունը:

Թող հավետ օրհնությամբ ապրի արդարների հիշատակը»,- ասված է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական խոսքում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ապրիլի 11-ին ՀՀ արտաքին գործերի նախարարությունում կայացել են խորհրդակցություններ ՀՀ եւ ՌԴ արտաքին գործերի նախարարությունների միջեւ՝ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում փոխգործակցության, Իրանի հետ կողմերի համագործակցության, ինչպես նաեւ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում բազմակողմ հարթակներում համագործակցության թեմաներով: Հայկական կողմը ներկայացնում էին ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալներ Մնացական Սաֆարյանը եւ Վահան Կոստանյանը, իսկ ՌԴ պատվիրակությունը գլխավորում էր ՌԴ արտաքին գործերի նախարարի տեղակալ Անդրեյ Ռուդենկոն:

Քննարկվել է հիշյալ տարածաշրջաններում գործունեությանը, ինչպես նաեւ համապատասխան տարածաշրջանային կառույցներում համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

Կողմերն ընդգծել են միջազգային հարաբերությունների առանցքային թեմաների շուրջ դիրքորոշումների քննարկման կարեւորությունը՝ միաժամանակ արձանագրելով երկկողմ պատրաստակամություն՝ շարունակելու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ մտքերի օգտակար փոխանակումը:

ԲՐԵՆԴԱՅԻՆ ԺԱՄԱՑՈՒՅՑՆԵՐ

ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչություն օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Watch24.am տելեգրամյան ալիքի եւ watch24.am-new ինստագրամյան էջի միջոցով իրականացվում է բրենդային թանկարժեք ժամացույցների առուվաճառքի գործունեություն: Նշված էջերի հետազոտման արդյունքում պարզվել է, որ բրենդային թանկարժեք ժամացույցների առուվաճառքի գործունեությունը կազմակերպվում է տեւական ժամանակ: Գովազդվում են շուրջ 187 հատ ընդհանուր 5.433.986 ԱՄՆ դոլար շուկայական արժեքով տարբեր տեսակի, հիմնականում՝ Rolex, Audemars Piguet, Patek Philippe թանկարժեք ժամացույցներ: Ի դեպ, վաճառքի ենթակա բրենդային ժամացույցները գովազդվում էին հանրությանը հայտնի տարբեր անձանց կողմից:

Միաժամանակ տեղեկություններ էին ստացվել, որ բրենդային թանկարժեք ժամացույցների առուվաճառքի գործունեությունն իրականացնում է Երեւանի բնակիչ Հ. Ք.-ն:

Ենթադրյալ հարկային իրավախախտումները բացահայտելու նպատակով մշակված եւ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում պարզվել է, որ Երեւանի քաղաքի բնակիչը, հաշվառված լինելով որպես անհատ ձեռնարկատեր, երբեւէ չի իրականացրել ապրանքների ներմուծումներ, ձեռքբերումներ եւ միայն, առանց հետագա օտարման, 2020 թվականի փետրվարի 18-ին դուրս է գրել բրենդային ժամացույցի տեղափոխման փաստաթուղթ, իսկ 2020 թվականի օգոստոսի 31-ից դադարեցրել է գործունեությունը:

Ստացված տվյալներն իրացնելու նպատակով Հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչության աշխատակցի կողմից «Հսկիչ գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակում գնում կատարելու նպատակով ընտրվել է վաճառվող Rolex տեսակի ժամացույցը, որի համար վերջինս կանխիկ պահանջել է 45.500 ԱՄՆ դոլար:

Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ կանխիկ եղանակով վճարվել է 45.500 ԱՄՆ դոլար գումար, որի դիմաց վերջինս վաճառել է տվյալ ժամացույցը՝ իր գործարանային տուփով:

«Հսկիչ գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելուց անմիջապես հետո, առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նպատակով հարկման օբյեկտը թաքցնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, քաղաքացին ձերբակալվել եւ բերվել է ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչություն: Վերջինիս անձնական խուզարկության ժամանակ հայտնաբերվել է 20.053 ԱՄՆ դոլար, 330 ԱՄԷ դիրհամ, 50 եվրո եւ Breguet տեսակի բրենդային ժամացույց:

ԼՈՒՐԵՐ

ԴԻ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

2023 թվականի ապրիլի 12-ին՝ ժամը 11:20-ի սահմաններում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պահակետերից մեկում հայտնաբերվել է հիմնարկի պահպանության ապահովման բաժնի ծառայող, 1977թ. ծնված Լ. Մ-ի դին՝ հրազենային վնասվածքով:

Նախնական տվյալներով՝ վերջինս կատարել է ինքնասպանություն իրեն ամրակցված ծառայողական զենքով:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում նախաձեռնվել է վարույթ:

Քրեակատարողական հիմնարկից ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Լ.Մ.-ն հետաքրքրություններ է ունեցել թղթախաղի նկատմամբ, որն էլ, ըստ էության, միգուցե հանգեցրել է ինքնասպանության:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Ապրիլի 5-ին «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնից ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին հաղորդում էր ստացվել, որ Գոգոլի փողոցի շենքերից մեկի մի բնակարանից ոտքի հրազենային վնասվածքով բուժօգնության է տեղափոխվել 32-ամյա մի կին:

Հիվանդանոց մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ ժամը 09.35-ին Նորաշխարյան փողոցի շենքերից մեկի մոտ՝ «Միցուբիշի» մեքենայի սրահում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ կնոջը օդաճնշիչ ատրճանակից կրակել, ապա ատրճանակի բռնակով հարվածներ էր հասցրել 34-ամյա ամուսինը, ինչից հետո մեքենայով դիմել էր փախուստի:

Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի եւ Գեղարքունիքի մարզի ՊԾ ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ՝ 34-ամյա տղամարդը Լիճք գյուղում հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Մարտունու բաժին:

Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է բյուրեղանման սպիտակ զանգված:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

Փաստի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԿԻՆԸ ՀԵՏԱԽՈՒԶՎՈՒՄ Է

ՆԳՆ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության եւ Գավառի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների արդյունքում ապրիլի 11-ին Արմավիր քաղաքի Երեւանյան փողոցում հայտնաբերվել եւ Գավառի բաժին է տարվել 40-ամյա Աննա Ա.-ն:

Նա հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 251-րդ հոդվածի (Ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելը) մեղադրանքով:

Խափանման միջոցը՝ բացակայելու արգելք:

Աննա Ա.-ն ներկայացվել է նախաքննական մարմին:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐՈՐԴԸ ՏԵՂՈՒՄ ՄԱՀԱՑԵԼ Է

Ապրիլի 11-ին՝ ժամը 19:48-ին, Արարատի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն տեղեկություն է ստացվել, որ Մասիս-Ռանչպար ավտոճանապարհին տեղի է ունեցել ՃՏՊ. կա տուժած:

Պարզվել է, որ Մասիս-Ռանչպար ավտոճանապարհի 5-րդ կմ-ին բախվել են Mazda 3 (վարորդ՝ Է. Դ.՝ ծնված 1979 թ.) եւ VAZ-2104 (վարորդ՝ Ա. Դ.՝ ծնված 1963 թ.) մակնիշների ավտոմեքենաները. վերջինիս վարորդը տեղում մահացել է:

Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները, փակել VAZ-2104 մակնիշի ավտոմեքենայի գազի բալոնի փականը, սահմանազատել տարածքը եւ դին մոտեցրել շտապօգնության ավտոմեքենային:

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ՎԹԱՐԻՑ

Ապրիլի 12-ին ավտովթար է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 00:10-ի սահմաններում Երեւան-Սեւան ավտոճանապարհի «Առինջ Մոլ» տանող հատվածում Գեղարքունիքի մարզի բնակիչ, 26-ամյա Էդգար Հայրապետյանը դեպի Սեւան ընթանալիս իր վարած Mercedes մակնիշի ավտոմեքենայով բախվել է Կոտայքի մարզի բնակիչ, 26-ամյա Նարեկ Հովսեփյանի վարած, սակայն ճանապարհի թույլատրելի հատվածում կայանված վիճակում գտնվող Toyota Fortuner մակնիշի ավտոմեքենային:

Վթարի հետեւանքով Mercedes-ի ուղեւոր, Գեղարքունիքի մարզի բնակիչ 29-ամյա Սիրարփի Հայրապետյանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Աբովյան» բժշկական կենտրոն: Օպերատիվ է գործել նշված բժշկական կենտրոնի բժիշկների հերթապահ խումբը, որոնք վիրավորին, որը հղի էր, մինչեւ հիվանդանոց տեղափոխելը տեղում առաջին բուժօգնությունն են ցուցաբերել:

Պարեկային ծառայությունն ու Քննչական բաժինն ունեն օպերատիվ տեղեկություններ, որ վթարի մեղավորը եղել է մեկ այլ ավտոմեքենա, որը շահագործվում է Yandex ծառայության կողմից որպես տաքսի. այն վթարային իրավիճակ է ստեղծել Mercedes-ի վարորդի համար, որը, չկարողանալով կառավարել ավտոմեքենան, բախվել է կայանված Toyota Fortuner-ին:

Աղբյուրը հայտնում է, որ Toyota-ն հաշվառված է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության հաշվեկշռում, իսկ դրա վարորդ Ն. Հովսեփյանը աշխատում է ՊԾ Կոտայքի գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակում որպես պարեկ:

Վարորդները ենթարկվել են սթափության փորձաքննության. եղել են սթափ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 11-ից 12-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 63 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՉԻ ԼՈՒԾՎՈՒՄ

Ապրիլի 10-ին Բերդ քաղաքում ցերեկով թափառող, անտեր շունը հարձակվել է մի կնոջ վրա, կծել նրան: Կնոջը տեղափոխել են Բերդ քաղաքի բժշկական կենտրոն, այնտեղ բժշկական օգնություն ցուցաբերել, շների կատաղություն հիվանդության դեմ սրսկել: Բերդ խոշորացված համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը հայտնեց, որ այդ կնոջ կյանքին վտանգ չի սպառնում: Նախկինում թափառող, անտեր շների կողմից մարդկանց, այդ թվում՝ երեխաների վրա հարձակումների դեպքեր են եղել Տավուշի մարզի Դիլիջան, Իջևան քաղաքներում, մարզի այլ բնակավայրերում: Մարզում, ինչպես ամբողջ Հայաստանում, չլուծված է թափառող, անտեր շների վնասազերծման հարցը:

Նախկին տարիներին այդ հարցը լուծվում էր որսորդական միությունների անդամների կողմից անտեր, թափառող շներին գիշերային ժամերին հրազենով ոչնչացնելու միջոցով: Այդ նպատակով համայնքների բյուջեներից գումարներ էին հատկացվում, համայնքապետարանները բնակչությանը նախապես զգուշացնում էին նախատեսված գործողության մասին՝ խնդրելով չանհանգստանալ գիշերը հնչող կրակոցներից: 2018 թվականի իշխանափոխությունից հետո Հայաստանի համայնքներում այլևս թափառող, անտեր շներին հրազենով չեն ոչնչացնում: Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը հայտնեց, որ երկու տարի առաջ շների գծով մասնագիտացված մի կազմակերպության Բերդի համայնքապետարանը ֆինանսավորել է, այդ կազմակերպությունը Բերդ համայնքում թափառող, անտեր 100 շուն է ստերջացրել: Աստղիկ Հակոբյանն ասաց, որ շների գծով մասնագիտացված կազմակերպությունները սահմանամերձ Բերդ համայնքում թափառող, անտեր շներին ստերջացնելու համար մեկ շան հաշվող 50 հազար դրամ են պահանջում, քանզի Բերդը հեռավոր բնակավայր է, աշխատանքների գնի մեջ մտնում են կազմակերպության աշխատողների տրանսպորտի, օրապահիկի եւ այլ ծախսեր: Բերդի համայնքապետարանը գումարներ չունի յուրաքանչյուր շան հաշվով 50 հազար դրամ վճարելու համար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՑԱՆԿ

Ո՞Ր ԴԵՊՔՈՒՄ ՉԻ ԿԱՐԵԼԻ ՁԵՆՔ ԿՐԵԼ

Կառավարությունը սահմանելու է զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների եւ վիճակների մասին ցանկը: Նախագիծը մշակվել է Առողջապահության նախարարության աբխազակիցների կողմից:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ խանգարող հանգամանքներն են՝

1. ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ

1. Օրգանական (ներառյալ սիմպտոմատիկ) հոգեկան խանգարումներ (FOO-FO9):

2. Հոգեկան խանգարումներ եւ վարքի խանգարումներ՝ կապված հոգեակտիվ նյութերի գործածման հետ (F10-F19):

3. Շիզոֆրենիա, շիզոտիպային վիճակ եւ զառանցանքային խանգարումներ (F20-F29):

4. Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ (F30-F39):

5. Նեւրոտիկ, սթրեսով պայմանավորված եւ սոմատոֆորմ խանգարումներ (նյարդային եւ մարմնաձեւային խանգարումներ՝ կապված գերհույզի հետ) (F40-F48):

6. Վարքային համախտանիշներ՝ կապված ֆիզիոլոգիական խանգարումների եւ ֆիզիկական գործոնների հետ (F50-F59):

7. Անձի եւ վարքի խանգարումներ՝ հասուն տարիքում (F60-F69):

8. Մտավոր հետամնացություն (F70-F79):

9. Հոգեբանական զարգացման խանգարումներ (F80-F89):

10. Սովորաբար մանկական եւ դեռահասության տարիքում սկսվող հուզական եւ վարքի խանգարումներ (F90-F98):

2. Նյարդային համակարգի հիվանդություններ եւ վնասվածքների հետեւանքներ

11. Էպիլեպսիա (G40, G41):

12. Գլխուղեղի եւ ողնուղեղի անոթային հիվանդություններ՝ խիստ արտահայտված կլինիկական խանգարումներով (G46, I60-I69):

13. Կենտրոնական նյարդային համակարգի ինֆեկցիոն (բակտերիալ, վիրուսային) եւ ինֆեկցիոն-ալերգիկ հիվանդությունների հետեւանքներ, գլխուղեղի եւ ողնուղեղի օրգանական ախտահարումներ՝ ընդհանուր ինֆեկցիաների, սուր եւ քրոնիկ թունավորումների ժամանակ՝ ֆունկցիայի խիստ արտահայտված խանգարմամբ կամ զարգացող ընթացքով՝ ֆունկցիաների չափավոր խանգարմամբ (G09):

14. Գլխուղեղի եւ ողնուղեղի վնասվածքների հետեւանքներ՝ ֆունկցիաների խիստ արտահայտված եւ չափավոր խանգարմամբ (T90.0-T90.3,T90.5-T90.9, T91.3):

15. Կենտրոնական նյարդային համակարգի բնածին արատներ (Q00-Q07):

16. Կենտրոնական նյարդային համակարգի նյարդամկանային հիվանդություններ (միոպաթիա, միասթենիա, միոտոնիա)՝ ֆունկցիաների խիստ արտահայտված կամ արագ զարգացող ընթացքով (G70-G73):

17. Կենտրոնական նյարդային համակարգի նեյրոդեգեներատիվ, դեմիելինիզացնող, աուտոիմուն եւ այլ բնույթի հիվանդություններ (Հանտինգտոնի հիվանդություն, Ալցհայմերի հիվանդություն, Պարկինսոնի հիվանդություն, կողմնային ամիոտրոֆիկ սկլերոզ, ցրված սկլերոզ, սիրինգոմիելիա եւ այլն) (G10-G14, G20-G26, G30-G32, G35-G37, G43.1,G43.8, G44.0, G45, G46, G91, G92, G94, G95.0):

18. Պերիֆերիկ նյարդային համակարգի հիվանդություններ, դրանց հետեւանքներ, նաեւ պերիֆերիկ նյարդերի վնասվածքների հետեւանքներ՝ ֆունկցիաների խիստ արտահայտված կամ արագ զարգացող ընթացքով (G50-G64):

19. Քնի խանգարումներ (G47):

3.ԱԿԱՆՋԻ, ՎԵՐԻՆ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20. Վեստիբուլյար ապարատի ֆունկցիայի խանգարում՝ Մենյերի հիվանդության նշաններով ուղեկցվող կայուն, խիստ արտահայտված վեստիբուլյար վեգետատիվ խանգարումներով (H81):

21. Երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլհամրություն (H91):

4. Աչքի եւ նրա հավելումների հիվանդություններ

22. Ակնագնդի շարժիչ նյարդի կայուն կաթված (պարալիչ)՝ դիպլոպիայով (H59, H53.2):

23. Տեսողության ֆունկցիան խախտող ծիածանաթաղանթի, եղջերաթաղանթի եւ աչքի այլ թաղանթների բորբոքային կամ դեգեներատիվ բնույթի քրոնիկ հիվանդություններ՝ խիստ արտահայտված տեսողական ֆունկցիայի զարգացող իջեցմամբ կամ երկու աչքում հաճախակի սրացումներով (H10 - H22):

24. Ակոմոդացիայի սպազմ կամ կաթված՝ կայուն (H 52.5):

25. Աֆակիա կամ արտիֆակիա՝ երկու աչքում (H27.0):

26. Գլաուկոմա (H50-H52):

27. Ցանցաթաղանթի շերտազատում (ցանկացած բնույթի)՝ երկու աչքում (H 53.0 - H 53.5):

28. Տեսողական նյարդի ցանկացած էթիոլոգիայի ատրոֆիա՝ տեսողական ֆունկցիայի զարգացող իջեցման դեպքում (H 58.0, H 58.1, H 58.8):

29. Տեսողության սրության իջեցում՝ կապված բեկող միջավայրերի կամ ակնահատակի կայուն փոփոխությունների, ռեֆրակցիայի, անոմալիայի կամ այլ պատճառների (վնասվածք, օրգանական հիվանդություններ եւ այլն) հետ, ակնագնդի բացակայություն կամ մեկ աչքում կուրություն կամ մեկ աչքում տեսողությունը՝ 0.05 եւ ցածր, իսկ մյուս աչքում տեսողությունը՝0.3-ից ցածր (H 53 - H 54 ,Q 11):

30. Ռեֆրակցիայի անոմալիաներ՝ կարճատեսություն մեկ աչքում կամ հեռատեսություն որեւէ առանցքով 12.0 D-ից ավելի, մյուս աչքում՝6.0 D-ից ավելի (H52.0, H 52.1):

5. Վիրաբուժական հիվանդություններ

31. Մաշկի հետայրվածքային, հետվնասվածքային, հետվիրահատական տարածուն սպիներ՝ վերին վերջույթի շարժումներն զգալի չափով սահմանափակող (L90.8, L91.0, Q82.8, R20.0, R22.2):

32. Ողնաշարի եւ կրծքավանդակի հիվանդություններ, զարգացման արատներ, վնասվածքների հետեւանքներ՝ ֆունկցիաների զգալի խանգարմամբ (M18.2, M20, M21.5, M24.5, M25.8, M43.2, M45, M50, M92.2, M95.3, Q6, E643):

33. Ձեռքի մատների կամ դաստակների դեֆորմացիաներ, վնասվածքներ (S62.7, S63.2, S64.2, S66.7, S68.4, S68.8, S69.7):

34. Վերին վերջույթի ոսկրերի, աճառների, մկանների, ջլերի ու հոդերի քրոնիկ բնածին արատներ, վնասումների հետեւանքներ եւ քրոնիկ հիվանդություններ՝ ֆունկցիայի խիստ խանգարմամբ (Z89, Q65, Q66):

35. Վերին վերջույթի բացակայություն կամ անդամահատում (Q68.1, Q70.0, Q71.0, Q71.2, Q78.0, R26.1, S14.3, S42.3, S44, S44.2, S44.7, S48, S76.7):

6. Խնդիրներ՝ կապված ապրելակերպի հետ

36. Խնդիրներ՝կապված նորմալ ապրելակերպի պահպանման դժվարությունների հետ (Z73):

37. Այլ խնդիրներ կապված ապրելակերպի հետ՝ ինքնավնասումներ առաջացնող վարք (Z 72.8):

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում ընթանում է Մովսես Սարգսի Եսայանի դատավարությունը:

Բերդ խոշորացված համայնքի Նավուր բնակավայրի բնակիչ, նախկինում դատված, միջնակարգ կրթությամբ, չամուսնացած, 1975 թվականին ծնված Մովսես Եսայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2018 թվականի հոկտեմբեր ամսից մինչեւ 2019 թվականի մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում «Հայանտառ» ՊՈԱԿ «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքից ապօրինի հատել է 74 հատ տարբեր տեսակի կանգուն ծառեր՝ պետությանը պատճառելով 6 միլիոն 96 հազար ՀՀ դրամի գույքային վնաս: Մ. Եսայանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 296 հոդվածի 3-րդ մասով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Սույն քրեական գործով, որպես իրեղեն ապացույց, դատարան է ներկայացվել բենզասղոցը, որով կատարվել են ապօրինի ծառահատումները: 2018 թվականի հոկտեմբերից մինչ 2019 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում շուրջ 7 ամիս Մովսես Եսայանը ոչնչացրել է մի անտառակ՝ 74 հատ ծառ, սակայն Արծվաբերդի անտառտնտեսության անտառապահները, անտառապետերը, անտառտնտեսության տնօրենը չե՞ն տեսել այդ ապօրինի հատումները, այդ հատումներից ստացված փայտանյութի տեղափոխել-իրացնելը:

Մեկ հոգին չէր կարող 74 հատ ծառ հատել, հատված ծառերը կտրտել, փայտանյութը բարձել, տեղափոխել:

Կարելի է ասել, որ սույն քրեական գործով նախաքննությունը թերի է կատարվել, առանց անտառապահների, անտառապետերի գիտության, համաձայնության մի մարդը չէր կարող 7 ամիս շարունակ ապօրինի անտառհատումներ կատարել, հատված փայտանյութն իրացնել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 11-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԽՈՀԱՆՈՑԸ ՓԱԿԵԼ ԵՆ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի մարզային կենտրոնի տեսուչները ստուգում են իրականացրել Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Արմավիր գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի խոհանոցում եւ պարզել, որ այն չի համապատասխանում իրավական ակտերով սահմանված նորմերին:

Մասնավորապես՝

- սննդի կառույցի հատակը հարթ չի եղել եւ պատրաստված չի եղել անջրանցիկ, չներծծվող, լվացվող նյութերից,
- սննդի կառույցն ապահովված չի եղել արհեստական օդափոխության համակարգով, անձնակազմի համար հանդերձարանով, ձեռքերի համար նախատեսված չորացման հիգիենիկ սարքերով,
- բոլոր սարքավորումները, գործիքները, որոնք անմիջական շփման մեջ են գտնվել սննդամթերքի հետ, չեն պահվել նորոգ վիճակում,
- սննդի շղթայում ներգրավված անձնակազմը չի ենթարկվել պարտադիր նախնական եւ պարբերական բժշկական զննությունների:

Մանկապարտեզի խոհանոցի (հանրային սննդի օբյեկտ) գործունեությունը կասեցվել է, սահմանվել է հայտնաբերված խախտումները վերացնելու ժամկետ:

ՍԵՐԲԻԱՆ ԶԵՆՔ ՉԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ

Բելգրադը զենք չի վաճառել եւ չի վաճառելու ո՛չ Կիեւին, ո՛չ Մոսկվային: Այս մասին չորեքշաբթի հայտարարել է Սերբիայի պաշտպանության նախարար Միլոշ Վուչեւիչը:

«Ավելի քան 10 անգամ մենք հերքել ենք այդ սուտը, նորից կանենք դա: Սերբիան չի վաճառել եւ չի վաճառելու զենք ո՛չ ուկրաինական, ո՛չ ռուսական կողմին, ինչպես նաեւ այն պետություններին, որոնք հակամարտության գոտու հարեւանությամբ են գտնվում: Հավանաբար, ինչ-որ մեկն իր առջեւ նպատակ է դնում Սերբիան ներքաշել հակամարտությունում, բայց մենք հետեւողականորեն մնում ենք մեր որդեգրած քաղաքականությանը հավատարիմ»,- ասել է նախարարը Tanjug գործակալությանը: Նա չի բացառել սերբական զենքի հայտնվելու հնարավորությունը հակամարտության գոտում «ինչ-որ կախարդական եղանակով», բայց, նրա խոսքով, «դա ոչ մի կերպ կապված չէ Սերբիայի հետ»:

Reuters գործակալությունը, հղում կատարելով Պենտագոնի գաղտնի փաստաթղթերին, որոնք հայտնվել են ինտերնետում արտահոսքի պատճառով, հանդես է եկել այն պնդմամբ, թե Սերբիայի կառավարությունը հնարավոր է համարում մահաստիյուռ զենքի մատակարարումն ուկրաինական բանակի համար: Գործակալությունը վկայակոչում է այն գծապատկերը, որն ամփոփում է Եվրոպայի 38 երկրների կառավարությունների պատասխանը Կիեւին ռազմական աջակցություն ցուցաբերելու պատրաստակամության վերաբերյալ հարցերին:

ԳՐԱՆՑՎԵԼ Է H3N8

ԹՌՉՆԱԳՐԻՊԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ

Չինաստանում 56-ամյա կինը մահացել է H3N8 թռչնագրիպի վիրուսի շտամից. տեղեկացրել է Medical Xpress-ը՝ հղում կատարելով Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը: Սա հիվանդության այդ շտամից մարդու մահվան առաջին դեպքն է:

ԱՀԿ-ի տվյալներով՝ կինը հիվանդացել է փետրվարի 22-ին, մարտի 3-ին տեղափոխվել է հիվանդանոց՝ ծանր թոքաբորբով, մահացել է մարտի 16-ին:

«Պացիենտը մի քանի ուղեկցող հիվանդություններ ուներ: Հիվանդության պատմության մեջ նշված էր շփումը ընտանի թռչնի հետ մինչեւ ախտանշանների հայտնվելը, նշվել է նրա տան մոտ վայրի թռչունների առկայության մասին»,- տեղեկացրել ՄԱԿ-ի առողջապահության գործակալությունը: «Հաղորդման պահին պացիենտի մերձավորներից ոչ մեկի մոտ վարակ կամ հիվանդության ախտանշաններ չեն եղել»,- ավելացրել են գերատեսչությունում:

Վիրուսի փոխանցման մասին

Չնայած շփումը թռչնի հետ կարող է վարակ առաջացնել, մինչ այժմ պարզ չէ, թե որն է հիվանդության ստույգ աղբյուրը, եւ ինչպես է այդ A(H3N8) վիրուսը կապված թռչնագրիպի այլ վիրուսների հետ, որոնք շրջանառվում են թռչունների շրջանում:

Սովորաբար թռչնագրիպի դեպքերը մարդու համար վարակված ընտանի թռչնի (մեռած, թե կենդանի) հետ ուղղակի կամ անուղղակի շփման հետեւանք են կամ էլ հետեւանք են աղտոտված շրջակա միջավայրի հետ շփման:

«Ըստ երեւույթին, այդ վիրուսը մարդուց մարդու հեշտ չի փոխանցվում, ուստի դրա տարածման վտանգը մարդկանց համար ազգային, տարածաշրջանային եւ միջազգային մակարդակներում համարվում է ցածր»,- հայտարարել է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը: Գրիպի վիրուսների մշտապես փոփոխվող բնույթի հետ կապված՝ ԱՀԿ-ն ընդգծում է գլոբալ համաճարակաբանական վերահսկողության կարեւորությունը: Այն անհրաժեշտ է վիրուսաբանական, համաճարակաբանական եւ կլինիկական փոփոխությունները վերհանելու համար՝ կապված գրիպի շրջանառվող վիրուսների հետ, որոնք կարող են ազդել մարդու կամ կենդանիների առողջության վրա:

ԱՀԿ-ն հայտարարել է, որ կենդանիների գրիպով մարդկանց վարակվելը հանգեցնում է տարբեր հիվանդությունների՝ կոնյունկտիվիտից, թեթեւ գրիպանման ախտանշաններից մինչեւ ծանր սուր շնչառական հիվանդություններ կամ նույնիսկ մահ:

Տեղեկացվել է հազվադեպ աղեստամոքսային կամ նյարդաբանական խանգարումների մասին:

H3N8 վիրուսը շրջանառվում է 2022 թվականից, առաջին անգամ հայտնաբերվել է Հյուսիսային Ամերիկայի ջրլող թռչունների մոտ: Այն վարակում է ձիերին, շներին եւ ծովաշներին: Մարդկանց վարակվելու մասին տեղեկություններ մինչեւ 2022թ. չեն ստացվել: Իսկ 2022թ. ապրիլին եւ մայիսին Չինաստանում հայտնաբերվել է ոչ մահացու երկու դեպք: Մի պացիենտի մոտ առաջ է եկել ծանր հիվանդություն, իսկ մյուսի մոտ ախտանշանները թեթեւ են եղել: ԱՀԿ-ն հայտարարել է, որ երկու մարդիկ էլ, հավանաբար, վարակվել էին վարակված ընտանի թռչնի հետ ուղղակի կամ անուղղակի շփման հետեւանքով:

ՏԱՐԻՔ

ԹՄՐԱՄԻՋՈՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Հայաստանում թմրամիջոց օգտագործողների թվի ավելացում ու օգտագործողների տարիքի երիտասարդացում է նկատվում. խնդիրը կանխարգելելու համար համապատասխան գերատեսչությունները հանձնարարականներ են ստացել վարչապետից:

Այս մասին ասաց ՀՀ առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանը ԱԺ-ում «Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի քննարկման շրջանակում՝ պատասխանելով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սոնա Ղազարյանի՝ «Տելեգրամ»-ի ալիքների միջոցով թմրամիջոցների ապօրինի վաճառքի վերաբերյալ հարցին:

«Մենք էլ մեր բժշկական հաստատությունների միջոցով նկատում ենք, որ ոչ միայն թմրամիջոց օգտագործողների շրջանում ավելացում կա, այլ նաեւ երիտասարդացում: Ցավոք սրտի, եթե անցած տարիների ընթացքում կարող էինք ասել, որ երիտասարդ կանանց շրջանում հազվադեպ դեպքեր են գրանցվում, ապա վերջին տարիներին նաեւ կանանց շրջանում է ավելացել օգտագործումը: Հիմնականում օգտագործում են սինթետիկ հոգեխթանիչներ»,- ասաց փոխնախարար Նանուշյանը:

Հիմնականում տելեգրամյան ալիքների միջոցով տարածման հնարավորությունների ընդլայնման պատճառով երբեմն կանխարգելման աշխատանքներն ամբողջությամբ հնարավոր չէ իրականացնել, սակայն փոխնախարարը վստահեցրեց, որ իրավապահ մարմիններն այդ ուղղությամբ աշխատում են:

Նա հայտնեց, որ վերջերս վարչապետի գլխավորությամբ քննարկում է եղել կառավարությունում, եւ գերատեսչությունները հանձնարարականներ ունեն: Մասնավորապես, Առողջապահության նախարարությունը բարձրացնելու է իրազեկումը, տվյալներ է հավաքագրելու, բուժաշխատողների շրջանում լինելու են վերապատրաստումներ:

Առողջապահության փոխնախարարն ընդգծեց նաեւ, որ հոգեխթանիչների օգտագործումը շատ անգամ հանգեցնում է նաեւ հոգեկան առողջության խնդիրների: Նույնիսկ դեպքեր են լինում, երբ հոգեբուժական բուժօգնության կարիք են ունենում եւ հիվանդանոցային բուժում են ստանում երիտասարդները, որոնք օգտագործում են հոգեխթանիչներ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՅԱՑԵԼ Է

«ՕԹԹԿ» ԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ ՖԻԼՄԻ ՊՐԵՄԻԵՐԱՆ

Ռեժիսոր Սերժ Գաբյանի «ՕԹԹԿ» (Օթը, Թոթը, Թվանքի կոթը) կատակերգական ֆիլմը ներկայացվեց հանրությանը: Ապրիլի 6-ին «Մոսկվա» կինոթատրոնում տեղի ունեցավ ֆիլմի պրեմիերան, որին ներկա էին ոչ միայն ֆիլմի ստեղծագործական անձնակազմը, այլեւ հյուրեր, դերասաններ, կինոսերներ: Կինոնկարում ափյուռֆահայ գործարարին շանտաժի է ենթարկում նախկին գործընկերը: Խնդիրը լուծելու համար բիզնեսմենը հրավիրում է մասնագետների ամբողջ աշխարհից: Միմյանց չհասկանալու եւ ոսիկանության հետ զուգահեռ ծավալվող ինտրիգների հետեւանքով ստեղծվում է անկառավարելի մեծ խառնաշփոթ: Ֆիլմի նկարահանող ռեժիսոր, սցենարի հեղինակ եւ գլխավոր պրոդյուսեր Սերժ Գաբյանը սկսել է աշխատել նախագծի վրա 2020 թվականից:

«Քրեական կատակերգություն է՝ նոր ժանր հայկական ֆիլմարտադրության մեջ, նման ոճային փորձեր քիչ են արվել: Ֆիլմը՝ իր ժանրային տարօրինակություններով, նոր շունչ կտա մեր մշակութային աշխարհին եւ հետաքրքիր կլինի. դրանով իսկ մեր ուզածին հասել ենք: Իմ ուզածը՝ որպես ռեժիսոր, պրոդյուսեր կայանալն էր, ստեղծել նոր ոճ, դրա հետ մեկտեղ անել ամեն ինչ, որ այն ծառայի հայ մշակույթին եւ ոլորտի զարգացմանը: Վստահ եմ՝ նման նոր արտադրանքը մեզ վրա ուշադրություն է սեւեռելու»,-նշում է Սերժ Գաբյանը՝ հավելելով՝ պետք չէ վախենալ նոր բաներ անելուց, փորձելուց: Նրա խոսքով՝ ֆիլմում ներգրավված են եղել թե՛ պրոֆեսիոնալ, թե՛ ոչ պրոֆեսիոնալ դերասաններ, մեծ մասը՝ թատրոնի դերասաններ, ինչպես նաեւ արտիստներ, որոնց առաջին դերասանական փորձն է՝ ի դեմս, օրինակ, ռեփեր Նարեկ Հովսեփյանի: «Իմ ոլորտը մի քիչ այլ է. առաջարկել են մի քանի ֆիլմում նկարահանվել, չեմ համաձայնել, քանի որ դրանք նույնատիպ են եղել: Քանի որ ես շատ եմ սիրում իմ գործում կարծրատիպ կոտրել, նկատեցի, որ այս գործով կարծրատիպ ենք կոտրում»,-նշում է Նարեկ Հովսեփյանը (A-Chilla):

Թատրոնի ռեժիսոր, դերասան Ջերարդ Փափազյանը «ՕԹԹԿ»-ն բնորոշում է որպես խելառ ֆիլմ: Փաստում է՝ նկարահանումները շատ լավ են անցել: Կասկածում է՝ գուցե ֆիլմը մեծահասակները չհասկանան, բայց երիտասարդներին վստահաբար հետաքրքիր կլինի. «ՕԹԹԿ»-ն տարբերվող բան է մինչեւ հիմա ստեղծված հայկական ֆիլմերի մեջ: Կինոնկարում ներգրավված են շուրջ 30 պրոֆեսիոնալ եւ ոչ պրոֆեսիոնալ դերակատարողներ: Ֆիլմում նկարահանվել են հանրահայտ դերասաններ Արսեն Գրիգորյանը, Ժիրայր Բաբազյանը, Արսինե Նավասարդյանը, Անդրանիկ Հակոբյանը եւ Արման Ղազարյանը, ֆիլմում նաեւ իր առաջին դերն է խաղացել ռեփեր Նարեկ Հովսեփյանը հայտնի որպես A-Chilla: Ֆիլմի համար օրիգինալ երաժշտությունը գրել է Սերժ Գաբյանը: Օգտագործվել են հանրահայտ երաժշտական գործեր՝ անակնկալ կատարումներով: Ֆիլմի նկարահանումները տեղի են ունեցել 2021 օգոստոսից մինչեւ 2022-ի մայիս Երեւանում:

Կինոնկարում նկարագրված բոլոր կերպարները մտացածին են եւ ոչ մի առնչություն չունեն իրական մարդկանց հետ, անունների զուգադիպությունը բացարձակապես պատահական է: Այն նախատեսված է 18+ տարիքի հանդիսատեսի համար: Ֆիլմում կան հակասոցիալական գործողությունների տեսարաններ եւ բազմաբարբառ ժարգոնային խոսակցություն: Ֆիլմի միակ նպատակն է ծիծաղաշատ ժամանց տրամադրել հանդիսատեսին: Ֆիլմը նախաձեռնող եւ իրականացնող «Հուլիգան Ստուդիոս» կինոարտադրական կազմակերպության առաջին կինոնախագիծն է:

ՍԱԴՐԱՆՔԻ ՀԵՏԵՎԱՆՔ

ԳԱԲԻ ՄՈՐԵՂԲՈՐ ՏՂԱՆ Է

Երեկ ադրբեջանական սադրանքի հետեւանքով ՀՀ ինքնիշխան տարածքը անձնվիրաբար պաշտպանելիս զոհված զինծառայողներից է Մկրտիչ Արմենի Հարությունյանը, որը երգչուհի Գաբի Գալոյանի մորեղբոր տղան է:

Այս մասին երգչուհին տեղեկացրել է իր ֆեյսբուքյան պաշտոնական էջում. «Զոհվածներից Մկրտիչ Արմենի Հարությունյանը իմ ազգականն է, ում մորեղբոր տղան նույնպես զոհվեց.. Դժոխք է սա, վերջ չկա սրան, տեր Աստված»:

Նշենք, որ Մկրտիչ Հարությունյանը Արագածոտնի մարզի Թալին քաղաքից էր: 33-ամյա Մկրտիչը ամուսնացած էր, ուներ երկու դուստր:

Հիշեցնենք, որ ապրիլի 11-ին ադրբեջանական սադրանքի հետեւանքով ՀՀ ինքնիշխան տարածքը անձնվիրաբար պաշտպանելիս զոհված զինծառայողներն են՝

Արթուր Ավետիսի Սահակյան (ծնվ. 1999թ.)
Հենրիկ Վաչագանի Քոչարյան (ծնվ. 1997թ.)
Մկրտիչ Արմենի Հարությունյան (ծնվ. 1989թ.)
Նարեկ Գագիկի Սարգսյան (ծնվ. 1994թ.)

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

«ԵՐՋԱՆԻԿ ԵՄ, ՈՐ ՕԳՆԵՑԻ»

Իտալիայի փոխչեմպիոն Միլանի «Ինտերի» բելգիացի հարձակվող Ռոմելու Լուկակուն մեկնաբանել է 2:0 հաշվով հաղթանակը պորտուգալական «Բենֆիկայի» նկատմամբ Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակչի առաջին խաղում: Լուկակուն խփել էր «Ինտերի» երկրորդ գոլը՝ արդյունավետ իրացնելով 11-մետրանոցը:

«Ես երջանիկ եմ, որ օգնեցի ակումբակիցներիս: Մենք խելացի խաղ անցկացրինք, եւ մենք էլի գոլ խփելու հնարավորություն ունեինք, բայց 2:0 հաշիվն այսպիսի լավ թիմի դեմ անկասկած լավ արդյունք է:

11-մետրանոցը ընդամենը կենտրոնացման հարց է: Ես երբեք ոչ մեկի չեմ լսում 11-մետրանոց իրացնելիս, նույնիսկ թիմակիցներիս չեմ լսում»,- Լուկակուի խոսքը մեջբերում է ՈՒԵՖԱ-ի մամուլի ծառայությունը:

«Ինտեր» - «Բենֆիկա» պատասխան հանդիպումը Միլանում տեղի կունենա ապրիլի 19-ին:

«ՀԱՅ ԿԻՆՈՆ 100 ՏԱՐԵԿԱՆ Է»

Այս տարի լրանում է հայ կինոյի հիմնադրման 100-ամյակը:

Այս կապակցությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հայտարարում է մրցույթ դպրոցականների եւ ուսանողների շրջանում:

Մրցույթի նպատակն է հայ կինոյի պատմությունը հանրահռչակելը, ճանաչելի դարձնելն ու հայ կինոյի նկատմամբ հետաքրքրություն սերմանելը:

Մրցույթի պայմաններն ու կանոնները են.

- ապրիլի 12-ից մինչեւ ապրիլի 20-ը ներառյալ՝ ամեն օր՝ ժամը 20:00-ին, ԿԳՄՍՆ ֆեյսբուքյան էջում կհրապարակվեն հայ կինոյի վերաբերյալ տարաբնույթ հարցեր,
- այն մասնակիցը, որն առաջինը մեկնաբանությունների հատվածում կտեղադրի ճիշտ եւ ամբողջական պատասխանը, կհամարվի հաղթող,
- պատասխանը պետք է գրել հայատառ,
- պետք է գրել ֆեյսբուքյան անձնական էջից,
- արդեն իսկ հրապարակված տարբերակը ենթակա չէ խմբագրման, լրացման, փոփոխման,
- պատասխանի հետ պետք է նշել նաեւ մասնակցի անունը, ազգանունը, մարզը, բնակավայրը, ուսումնական հաստատությունը,
- նշված կանոններին ու պայմաններին չհամապատասխանող հայտերը չեն դիտարկվելու:

Յուրաքանչյուր օր նախորդ օրվա հաղթողի անունը կհրապարակվի ԿԳՄՍ նախարարության ինստագրամյան էջում:

Հաղթողները կպարգեւատրվեն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության խրախուսական նվերներով՝ հայ կինոյի հոբելյանական միջոցառումների շրջանակում:

● *Ապրիլի 15-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Կոշկավոր կատուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-4000 դրամ: Սկիզբը՝ժամը 14:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ երբ է կատարվում ուսանողի փոխատեղումը:

Իրինա Մելքոնյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ուսումնական հաստատությունում ուսումնական տարին սկսելուն նախորդող եւ հաջորդող երկու շաբաթվա ընթացքում իրականացվում է փոխատեղում՝ ըստ մասնագիտությունների: Փոխատեղման արդյունքում անվճար համակարգում ընդգրկված, սակայն նախորդ ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն չցուցաբերած ուսանողներն ընդգրկվում են վճարովի համակարգ, իսկ վճարովի համակարգի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները՝ անվճար ուսուցման համակարգ՝բացառությամբ մինչեւ 19 տարին լրանալը հիմնական կրթության հիմքով ընդունված կամ օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող ուսանողների:

Ուսումնական հաստատության տնօրենի կողմից երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է անվճար եւ վճարովի համակարգ անցած ուսանողների ցանկը եւ պատշաճ կերպով տեղեկացվում է ուսանողներին:

Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից երկու շաբաթ առաջ ուսումնական հաստատության տնօրենը տալիս է հայտարարություն ուսանողներին տեսանելի վայրում, ինչպես նաեւ ինտերնետային կայքում վճարովի հիմունքով սովորող ուսանողի սոցիալական վիճակի եւ բարձր առաջադիմության արդյունքների հիման վրա ուսման վճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումներ ընդունելու մասին: Դիմումներն ընդունվում են հայտարարության օրվանից մինչեւ կիսամյակի ավարտը, իսկ տվյալ ուսումնական տարում ուսումնական հաստատություն ընդունված ուսանողների դիմումներն ընդունվում են կիսամյակը սկսելուն նախորդող առաջին շաբաթվա ընթացքում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուսանողը հաստատության տնօրենի անունով դիմումի հետ մեկտեղ կցում է նաեւ սահմանված սոցիալական վիճակի վերաբերյալ հավաստող փաստաթղթերը:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որ դեռևս դիմել համայնքի ղեկավարին անշարժ գույքի նոր հասցե ստանալու համար:

Մերի Մնացականյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մ. Մնացականյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի, այլ տեսակի անշարժ գույքի պետական գրանցման համար պետք է ներկայացվի նաեւ անշարժ գույքի հասցե տրամադրելու մասին համապատասխան ղեկավարի որոշումը, եթե՝

- անշարժ գույքի նկատմամբ իրավահաստատող փաստաթղթերում նշված չէ գրանցման ներկայացվող անշարժ գույքի հասցեն, կամ նշված հասցեն չի պարունակում «ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի (այսինքն՝ փողոցի, հրապարակի, պողոտայի եւ այլն) անվանում» կամ «անշարժ գույքի հերթական համար» վավերապայմանները,
- ներկայացվում է անշարժ գույքի միավորների բաժանման կամ միավորման պետական գրանցման դիմում:

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գործարքներից, այդ թվում՝ առուվաճառքի պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման դիմում կարող է ներկայացնել այդ գործարքի կողմերից յուրաքանչյուրը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Ազգային ժողովում

Երեկ Ազգային ժողովում տեղի էր ունենում հարցուպատասխան պատգամավորների եւ կառավարության անդամների միջեւ: Զարմանալի է, որ նախարարներն ու պատգամավորներն աչքի են ընկել բարձր տրամադրությամբ: Պակաս ուրախ չէր նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը այն դեպքում, որ հայկական կողմն ունի 4 գոհ, 6 վիրավոր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 7 + 2 + 7
Կոտայքի լեռներ	+ 2 + 4 + 4 + 6
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 8 + 9 +11
Գեղարքունիք	+ 3 + 7 + 4 + 8
Լոռի	+ 7 + 9 + 9 + 12
Տավուշ	+ 8 + 10 +10 + 13
Արագածոտնի լեռներ	+ 4 + 6 +11 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 3 + 1 + 4

Արարատ	+ 9 + 11 +12 + 15
Արմավիր	+ 8 + 10 +12 + 15
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 + 4 + 6
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +11 + 14
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 +17 + 20
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 11 +13 + 16
Արցախ	+10 + 14 +15 + 19
Երեւան	+ 8 + 10 +11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*